

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 13 կոպէկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարտ եւ Արամ Իվանովիչ Սարգսեանները խորին վշտով յայտնում են աղքատներին եւ ծանօթներին իրանց թանգազին եւ անմոռանալի հօր՝ Կոլլէժսիի սովետներին

ԻՎԱՆ ՆԻԿԻՏԻՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ

Երկարամեծ մահվան մասին, որ տեղի ունեցաւ ապրիլի 18-ին, գիշերվայ 12 ժամին, Հոգեհանգիստը ամեն օր, երեկոյեան 6 1/2 ժամին, Արամ-Արատակայա հրապարակի վրայ, տ. Ախլէրզօլի, № 9. Յուդարկաւորութիւնը տեղի կունենայ երեքշաբթի, ապրիլի 23-ին, ղեկի Մոզնու ս. Գեորգ եկեղեցին, իսկ այնտեղից դէպի Խօջիվանքի գերեզմանատունը: 1—1

Անաստասիայ, Վառվառէ եւ Պողոս Կուչերեանները, Մարիամ, Մկրտիչ, Յովսէփ եւ Պողոս Կարա-Մուրզաները խորին ցաւակցութեամբ յայտնում են՝ առաջինը իր որդւոյ, երկրորդը իր ամուսնու, երրորդը իր եղբօր, իսկ մնացածները իրանց փեսային

ՍՏԵՓԸՆ ԿՈՒՇԵՐԵԱՆԻ

Երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ առաջացած մահի. Յուդարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, ապրիլի 21-ին, առաւօտեան ժամը 12-ին, Պող. Կարա-Մուրզայի բնակարանից, Մուխրանակայա փողոց, տուն Մուխրանակու, դէպի Կուչիկայի կաթոլիկաց գերեզմանատունը: 1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնել, որ այսօր, ապրիլի 21-ին, Վանքի Մայր եկեղեցում կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ

ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆՑԻ

հոգեհանգիստը:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ գրոյց. Մատենագրութիւն. Նամակ Խմբագրութեան. Երեքին լուրեր. ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ԵՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. ՀԵՒԱԳԻՆՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԱՅ ԶՐՈՑ

Երեք շաբաթ է, ինչ մենք, ընթերցող, չենք տեսնում իրար հետ կիրակի օրերը Տօնի էին, մէկ էլ այն կայ, որ թէեւ խօսելը հաճելի է, բայց միշտ խօսելու կարողութիւնը մեր ձեռքէն չէ:

Եւ կամենայի այսօր տօնական մի քանի տը-պաւորութիւններ հաղորդել ձեզ: Չէ որ ամ-բող Երկու շաբաթ մենք տօնի էինք կատա-րում: Շատ բնական պիտի համարէք, որ այսօր էլ երբ այդ տօնները դեռ բոլորովին չեն հեռա-ցել ու մոռացվել, մեր առաջին խօսքը տօնա-կան տպաւորութիւնները լինեն:

Անցեալ շաբաթ օրը, թաթախման օրը, եւ ուղեցի մտնել «Մշակի» խմբագրատունը: Առա-ւօտեան ժամի 11-ն էր: Փողոցայ խմբագրա-տուն եւ մնացի ապշած: Փողոցը լիքն էր մարդ-կանցով. խմբագրատան դրան մօտ կանգնած էր քաղաքագահ ոստիկանը եւ աշխատում էր մարդկանց մէկ մէկ ներս թողնել:

Մտնել անհնարին էր: Մի քանի րոպէ կանգ առայ եւ դիտում էի բազմութիւնը: Հաւաք-վել էին այդտեղ ամեն հասակի եւ սեռի մար-դիկ: Կային ծերեր, պառաւ կանայք, կային ե-րիտասարդներ, աղջիկներ, երեխաներ: Բայց բոլորն էլ մի եւ նոյն պատմութիւնն ունէին: Դրանք ամենքը մի ընդհանուր անուն, մի ընդ-հանուր դէմք ունէին: Աղքատութիւնը, գործա-ղութիւնը ամեն օր, ամեն ժամ կրծողում, տը-պաւորակում են շատ շատերին: Եւ ահա այդ ա-մենօրեայ աւերանքների բեկորները այս փայ-լուն, ուրախ օրը դուրս էին սողացել իրանց

անյատակ դժբաղդութեան խորշերից, եկել էին տեսնելու, թէ բարի մարդիկ մի որ եւ է բա-ժին տուել են իրանց թէ ոչ:

Դրանք աղքատներ էին, «Մշակի» աղքատները: «Մշակի» եւ ասում այն պատճառով, որ այդ օրը ամբողջ հեծեծող, սողացող ու տկուր թիֆ-լիսը չէր մեր խմբագրատան առջեւ: Ոչ, մի մասն էր, գուցէ մի անշնան մասը, որ դիտէ թէ կայ «Մշակ», կան մարդիկ, որոնք փող են ուղարկում «Մշակին» աղքատներին բաժանելու: Կամ իսկ թիֆլիսում քանի ուրիշ խմբա-գրութիւններ, քանի բարեգործական ընկերու-թիւններ կան: Ամեն մէկն ունի իր աղքատնե-րի խումբը: Եւ այդ օրը, երեւի, քիչ չէին մեր քաղաքում այնպիսի դռներ, որոնց առաջ մի-մեանց վրա կուտված էին միմիայն, լացող մարդիկ:

Եւ կանգնած նայում էի եւ երեւակայում այդ բոլոր դռները միմեանց մօտ: Այդ ողոր-մութիւն տուող դռները իմ երեւակայութեան մէջ այլ եւս հեռու չէին միմեանցից, քաղաքի զանազան կողմերում, զանազան փողոցների վրայ, այլ եկել չարվել էին միմեանց կողքին: Որքան կրծողված, անպէտքացած մարդիկ, որ-քան արտասուք, որքան աղաչանք...

Եւ չէր կարողայ նայել մարդկային դժբաղ-դութեան այդ ծովին եւ հեռացայ: Իմ հին քն-կերներից մէկը, կեանքի դառնութիւնները շատ ճաշակունք են այդ պատճառով էլ ցինիկ ճշմար-տութիւններ շատ սովորած մի մարդ, ինձ շատ անգամ է ասել. «Աշխատիք ներկայ թուի դարձ-նել, եղան չորացած ջրեր դարձնել»: Այդ բանը, խոստովանում եմ, ինձ երբեք չաջողվեց կեան-քիս մէջ:

Խմբագրատան կողքին, մի հինգ-տասը քալ հեռու այդ մուրացկանների մեծ կոյտից, թիֆ-լիսի բազմաքան էր: Եւ գնացի այնտեղ:

Չատկական բազարը թիֆլիսում մի արտա-տուր, մի շարժուն տեսարան է ներկայացնում: Ամբողջ երկու փողոց խիտ առ խիտ լցված են մարդկանցով. շարժվել այդ բազմութեան մէջ անհնարին է ամանց դժուարութիւնների: Գրա-ւոր մի փառքի անկիւն մարդկային այդ մըջ-նանցի մէջ, եւ նայում էի: Իրարանցում գա-

գաթնակէտին էր հասել: Ծարժում, աղաղակ, շտապով այս ու այն կողմ ընկնել—եւ գնել, անկողն գնել, գնել ինչ գնով էլ լինի, գնել—որքան կարելի է շատ, որքան կարելի է լաւ—ահա ինչն էր տալիս ու վրա արել այդ բերա-ւոր բազմութիւնը:

Գէտ ժամ այդ եռացման մէջ մնալը բաւական է գլուխ չշնչեցնելու համար: Ձեզ ճնշում է, նեղում է մարդկային բացված, գրգռված ախոր-ժակը: Դուք ընկել էք ստամոքսի աշխարհը. ձեզ ամեն կողմից սեղմում, ճնշում է նա, այդ ստամոքսը, որ այդ օրը իր բոլոր կանոններն է բաց արել, որ մի երկար ու երկար ցուցակ է տուել այս անագին ամբողջի եւ պահանջում է կատարել ամեն ինչ: Ոչինչ չէ մոռացվում, մոռանքը անգաղար գրգռանքն են մոռում, փող են հանում առնելու համար: Մէկին երեք գին են ուզում—ոչինչ, միայն տուր, միայն հասցրու: Մայրեր վրա բարձած գտնների ան-թիւ դիտման են բերվում: Մի ծայրից այդ սայլերը մտնում են բազար, միւս ծայրից դուրս են գնում դատարկ: Տանում են անգա-ղաբ: Պապը մի խոզի գոճիների սպիտակ մարմինները, անյայտանում են խանութներից, իսկ նրանց տեղ նոր եւ նոր շարաններ են դա-լիս, կախվում: Ձկնի խանութները դատարկ-վում են, նորից էլ լցվում:

Մարդիկ գգվածի են նման, շտապում են ձեռքից բաց չը թողնել, շտապում են շուտ հա-ւաքել, տանել...

Այստեղ կեանքի խնջոյք, այնտեղ, խմբագրա-տան առաջ, այդ խնջոյքից դուրս շարժված քաղցած, արտասովոր դժբախտներ: Այստեղ տօ-նի է կատարում միջին կողմից լցված ստա-մոքսը, այնտեղ դուրս է հացի երես չը տե-սած որբը... Բայց այսօր տօնների տօնն է. այ-սօր աշխարհը պատրաստվում է ճշմարտու-թեան, գթութեան յարութիւնը տօնելու: Եւ գթութիւնը—ուզում եւ հաւատալ—գոնէ այ-սօր չի մոռանայ այդ դժբախտներին:

Չի մոռանայ... Անցաւ ժամանակ, եւ նորից մօտեցայ խմբագրատուն: Բազմութիւնը այլ եւս չէր կար. նա քաշվել էր, թողնելով մայրի վրա թափված մի քանի խեղճեր: Դրանք վերջին հեռանքն էին, դրանք դեռ չէին ուզում հաւա-տալ, որ ոչինչ չը կայ, թէեւ խմբագրատան ծա-ռան ձայնը կորցրել էր, այնքան բղաւել էր, որ այլ եւս բան չէ մնացել, ինչ եղել է, բաժա-նել են:

Ներս մտայ, հետաքրքրվեցայ, թէ որքան փող են բաժանել: Ինձ պատասխանեցին—Ութսուն ռուբլի:

Խօսելը, դատելը աւելորդ էր: Համեմատելու կարիք չը կար, այնքան բազմութիւն եւ այս-պիսի մի գումար...

Հայկական իրականութիւնը Չատկի տօններին էլ չէր հանգիստ թողնում: Գոնէ այդ կարմիր, գեղեցիկ օրերին նա մոռացվել, ծածկվել կամ չպար քսել իր անտանելի դէմքին: Ութսուն ռուբլի, շատ շատը գնացին դատարկ ձեռքով, տանելով իրանց հետ իրանց անողորմ միմեանց, իսկ որոնք ստացան, կօպէկներ միայն ստացան եւ դարձնելով միմիայնով, հառաչելով գնացին: Զուրաբագրին խեղճերին, ուրախացնէին գոնէ մի օր, մի գիշեր, մի այնպիսի գիշեր, երբ այսօրվայ այն անագին բազարը պիտի շարվէր սեղանների վրա եւ ուտելու կարողութիւն պահանջէր նրանցից, որոնք ուրիշներից չէին այդ օրը հաց խնդրել:

Բարեգործութիւնը հայի մէջ խլանում է: Սա սարսափելի է: Որովհետեւ այնտեղ, ուր խա-նում է բարեգործութիւնը, կարող է միայն մի բան գարգանալ—գաղանկութիւնը...

Եւ դեռ աւելի մեծ փաստ ունեւ ձեզ հաղոր-դելու, փաստ, որ բարեգործական գաղափարն անկումն է ցոյց տալիս: Հարկաւոր էր, որ հէնց այդ միջոցին, երբ ութսուն ռուբլու իրողու-թիւնն էր կանգնած իմ առջեւ, եւ գոնէ խմբա-գրական սեղանի վրա թիֆլիսի Հայոց Բա-րեգործական Ընկերութեան հայելը:

Նոր էր նա Բարեգործական եւս սկսեցի թերթի նրան: Թիֆլիսի հայոց... Ինչ մեծ

անուն: 50 հազարից աւել հայ կայ թիֆլիսում: Այդ 50 հազարը տուել են իրանց բարեգործա-կան ընկերութեան 108 անդամ: Այս դեռ բա-լորը չէ. 108 հոգի միայն գրվել են, իսկ 6 ռուբլի վճարելու յօժարութիւն ունեցել են միայն 89 հոգի:

Ահա ինչ է ասում իրականութիւնը: Օր չէ լինում, որ «Մշակի» խմբագրատան շէնքում չը լսվի հեծեծանք, աղաչանք. օր չէ լինում, որ աղքատը չը գայ ձեռք մեկնելու: Յոյց ենք տալիս բարեգործական ընկերութիւնը, ասում ենք, որ այնտեղից խնդրեն օգնութիւն: Պատա-խաններ ենք ստանում, որ այնտեղ չեն օգնում: Եւ իրաւ, ինչպէս օգնեն, 89 անդամով:

Ողբում են դժբաղդ ու վտիտ թւանշանները: Բարեգործական ընկերութեան հաշիւ էջերից: Անցեալ տարի օգնութիւն են ստացել 293 մար-դիկ, միջին թւով ամեն մէկը 12 ռուբլուց մի քանի կօպէկ աւել. իսկ այս տարվայ համար նշանակված է մի գումար, որ եթէ բաժանվի նոյնքան կարօտեալների վրա, իւրաքանչիւրը արդէն 9 ռուբլուց աւել մի բան կը ստանայ:

Ինքը ռուբլի մի հոգու, մի ամբողջ տարվայ համար... Ահա ինչ է կարողանում անել ութ հոգուց բաղկացած մի ամբողջ վարչութիւն: Դեռ լաւ, որ նախկին Կովկասեան Բարեգործա-կան ընկերութիւնը թողել է թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան 40 հազար ռուբլու մի գումար, թէ չէ՝ 89 անդամների վճարը չէր բաւականանայ ընկերութեան գոր-ծավարի եւ բնակարանի վարձի համար: Եւ վարչութիւնը երջանիկ է, որ կարողացել է 293 հոգու 12-ական ռուբլի տալ, 481 ռուբլի միայն չէ անձեռնմխելի գումարին եւ դեռ 212 ռուբլի 23 կօպէկ էլ աւելացած փող պահել իր ձեռքում:

Ահա մեր բարեգործութիւնը, ահա մեր ե-ռանդը, մեր ընդունակութիւնը, մեր սիրտը, մեր գաղափարը...

Հաւ, շատ լաւ կապրեն մեր աղքատները, մեր դժբաղդները: Դրա գեղեցիկ ապացոյցը այն փաստն էր, որի մէջ դառն-վում է 50 հազար ժողովրդի մի հատիկ բարե-գործական ընկերութիւնը...

Եւ սա սարսափելի է ոչ այնքան աղքատների եւ տնանկների համար—նրանք առանց այդ էլ գժբաղդ են, նոյն իսկ եթէ ամենքը ար-ժանանան ամսական մի ռուբլի բարեգործու-թեան: Սարսափելի է դա աւելի հասարակու-թեան համար, մի հասարակութեան, որ տես-նում է իր բարեգործութեան արդիւնքը եւ չէ կարծում երկնային այն փրկարար գաղափար-քից, որ ամօթ է կոչվում: Երբ հասարակու-թիւնը այնպիսի շարժողութիւն փաստերով ցոյց է տալիս, թէ բարին չէ սիրում, նշանակում է, որ նա սիրում է չարը: Գթութիւն չը կայ, ու ամենալաւ ապացոյցն է, որ կայ գաղանկութիւն: Ընկածին չենք վեր կացնում—նշանակում է, որ դիտենք միայն ծուռտեղ. աղքատի արտա-սուքը սիրտ չէ շարժում—նշանակում է, որ բորենիների սիրտ ունենալ...

Ահա ինչ են ասում փաստերը: Ահա ինչ են թիվերը: Եւ ամեն փաստը տպաւորութիւնները ան-ողորմ պարզութեամբ:

Այսօր Բարեգործական ընկերութեան ընդհա-նուր ժողով է: Հետաքրքրվեցէք, կազմակերպե-ցէք, պահանջեցէք:

Անելը գժուար չէ: Բաւական է մի քիչ մը-տածել, ամօթ զգալ, ամօթ...

1.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Dr. Paul Rohrbach: „Im vordern Asien. Politische und andre Fahrteer.“ Verlag der „Hilfe“ 1901. 142 s. Դ-ր. Պ. Բորբախ. «Առաջարկ Բախարում. քաղաքական եւ օրիշ ճանապարհորդութիւններ»:

Մի քանի անգամ ճանապարհորդել է Բորբախ առաջարկ Գորբ-Ասիայում եւ իր ճանապար-հորդական տպաւորութիւններն ու դիտողու-թիւնները հրատարակել է թէ առանձին գրքերով (օր. «In Turan und Arménien», «Die Bagdad- bahn») եւ թէ լրագրական յօդուածներով: Գեր-

մանական հասարակութեան կողմից յատուկ ուշադրութեան արժանացան նրա վերջին քաղաքական-աշխարհայրական յօդուածները «Preussische Jahrbücher» ամսագրում, որովհետեւ նրանց ներքին գրեթէ բացառապէս Բաղդադի երկաթուղու գծի մասին էր. մի նիւթ, որը ներկայումս անքան հետաքրքրում է գերմանական կապիտալիստներին եւ պետութեանը:

Ներկայ գիրքը Բորթալի վերջին ճանապարհորդութեան (1900—1901) հետեւանքն է. Այս անգամայն ճանապարհորդութիւնը աւելի լայն չըլանակ ունի, աւելի շատ կէտեր է չօղպում. Հեղինակը անցել է Պետերբուրգի, Մոսկւայի վրայով եւ այցելել՝ Կրասնովոդսկ, Սամարկանդ, Տաշկէնտ, Մերվ, Ջուլֆա, Ուրմիա, Էրբիլ, Ջէզիրէ-Է-Իրն-Ամար, Ուրֆա, Կալաթ-Սեման, Մոսուլ, Բաքու, Բաղդադ, Միան-Կոտու, Պերսեպոլիս, Թէհրան եւ այլն:

Գիրքը միանգամայն ուշադրաւ է թէ իր ներքին բողոքականութեանը եւ թէ արտաքին-նով՝ Նրա մէջ կան բազմաթիւ պատկերներ՝ օրինակ, Կարսի բերդը, Լինկիթմուրի գերեզմանը Սամարկանդում, թիւրքմէներ, հայուհիներ, ասորիներ, մի քանի քաղաքներ ու բնութեան տեսարաններ, որոնք աւելի պարզում եւ բէրիք են դարձնում խօսքով նկարագրածները:

Պ. Բորթալ թեմէն կերպով խօսում է Ռուսաստանի տնտեսական կեանքի մասին ընդհանրապէս, յիշում է Կովկասի անկիւն անհամար բնական հարստութիւնների մասին եւ ապա երկար կանգ է առնում այն հարցի վրա, թէ քաղաքական սրայիսի մեծ նշանակութիւն ունի Կարսի երկաթուղին. Նրա կարծիքով, դա միայն գործի սկիզբն է, իսկ շարունակութիւնը կարող է հասնել ուսմանին մինչեւ Էրզրում, Սուազ, Տրապիզոն, Էնգորա եւ այլուր: Սակայն գերմանական շահերին Առաջաւոր Ասիայում ուսմանը գերմանացիների ամենապատանջաւոր մրցակիցներն են, ուրեմն անհրաժեշտ է նախօրոք գիտնալ:

Դրանից յետոյ յարգելի հեղինակը խօսում է թիւրքիայի տնտեսական դարգացման, նրա մօտիկ անցնալու եւ ներկայի մասին եւ ապա նորից գտնաւորել Ռուսաստանին՝ շեշտում է, թէ մեծ է նրա ոյժը, հզոր է նրա ազդեցութիւնը, որ զլխաւորապէս նրա քաղաքականութիւնն է հայկական հարցի լուծումը գտնադնողը եւ այլն:

Ռուսաստանը իր ազդեցութիւնը տարածել է ոչ միայն Կովկասից դէպի արեւելք եւ արեւմուտք, այլ եւ դէպի հարաւ. Պարսկաստանը կամայ-կամայ, անկատարի կերպով անցնում է Ռուսաստանի ձեռքը եւ ուշանալու չէ այն օրը, երբ ամբողջ երկիրը մի աւատական իշխանութիւն կը դառնայ ուսմանի համար:

Գալով Բաղդադի երկաթուղու կատարելիք գերին, Բորթալ կարծում է, որ նա շատ մեծ նշանակութիւն պիտի ունենայ թէ Գերմանիայի, թէ Թիւրքիայի եւ թէ մանաւանդ տեղական ազգայնականութեան համար: Նա պիտի վերականգնէ Փոքր-Ասիայի ու Միջագետքի պատմական ծաղկած գրութիւնը, պիտի ստեղծէ նախանձիկ տնտեսական կեանք եւ վերջապէս պիտի վերջ դնէ քրեւերի ու թիւրքերի սանձարձակ աւաղակութիւններին ու բնութիւններին:

Որ Բաղդադի երկաթուղին մեծ օգուտներ պիտի տայ գերմանացիներին—դա աւելի քան պարզ է. Բայց նա կարողանալու է, արդեօք, փոխել Համիդի քաղաքականութիւնը, որ է անվերջ հալածանքներ եւ կոտորածներ, հրէն եւ սրի քաղաքականութիւնը:

Այս վերջինը շատ կասկածելի է, մանաւանդ որ Գերմանիան դեռ չէ աշխատում այդ ուղղութեամբ մի որ եւ է քայլ անել:

Ե. Թ.

Նոր ստացված գրքեր.—1) (Բժշ. Վահան Արծրունի—«Բժշկի զրույցներ № 3—Վարակիչ հիւանդութիւններ եւ նրանց թոյնը», պատկերազարդ 83 էջ, 1902, գինը 15 կոպէկ 2) Յար. քան. ձուլութիւն —«Գիւլի Ալի» 1902, 43 էջ, գինը 15 կոպէկ 3) Բժշ. Սիմէոն Շահ-Նազարեան—«Հայոց թեմական հոգեւոր գաղութների կանոնադրութեան նախագիծը», Մոսկւա, 1902, էջ. XX+172+VIII, գինը 1 ռուբլի 4) Տեղեկագիր Հոգաբարձութեան Ու. Լուս. Աղբ. Հիւանդանոցի ձմրանից, 1901 յունվար 16—1902 յունվար 16, 2 փոխադր., 1902, 5) Уставъ Армянскаго Драматическаго Общества. Тиф. 1902. 6) Отчетъ Тифлискаго Армянскаго Благотворительнаго Общества за 1901 годъ, Тиф. 1902. 7) Отчетъ Евангелическаго—Лютеранскаго Дамскаго Благотворительнаго Общества, Тиф. 1902. 8) Мохаммедъ Шах-тахтинскій—«Фонетическая Восточная Азбука», Тиф. 1902.

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկւա, ապրիլի 10-ին

Կարգադիր «Մշակ» № 63-ում բժշկ. Ս. Շահնազարեանի նամակը, որի մէջ, ի միջի այլոց, պ. բժիշկը պահանջում է «Մշակ» № 42-ում լոյս տեսած «Դէպք-Դէպք» յօդուածի հեղինակ պ. Սրաքեանից—որ ոչ ոք չէր գրել, թէ ովքեր էին դանիճից զուրա եկող այն պարոնները, որոնք չուզեցին բժշկի ճառախօսութիւններին ակամայ դնել:

Սրանով պատիւ ունենք յայտնելու, պ. բժիշկ, որ ձեզ լսելու ցանկութիւն չունեցողները—մենք էինք:

Ինչ էք կամենում:

Մեր հասցենք կամ ձեր լեզուով որ ոչ ոք չէր անումները կարող էք գտնել եւ իմանալ Մոսկւայի օրէր-պոլիցիմէյստերի դիւանին կից—հասցեների գրասենականում:

Ժողովականներից, որոնք թուով մօտ 32 հոգի էին, կային եւ ուրիշ զուրա եկողները դանիճից, երեւի նրանք էլ իր ժամանակին կը յայտնեն իրանց:

Բ. Արուսեան
Ս. Թումանյան
Մ. Կալաբանյան
Յ. Կարապետյան
Ա. Պողոսյան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐՈՐ

Հանդուցեալ Քրիստոսփոր Կարա-Մուրզայի երաժշտական աշխատութիւնները հրատարակելու համար պատշաճաւոր իշխանութեան կողմից թոյլ է տրված բանալ հանդանակութիւն: Այդ աշխատութիւնների վաճառումից գոյացած արդիւնքը կը գործադրվի հանգույնալի զաւակների ապահովութեան վրա: «Մշակ» խմբագրութիւնը ընդունում է այդ նպատակի համար կամաւոր նուիրատուութիւններ:

«Մշակ» խմբագրութիւնը իր կողմից յատկացնում է 20 ռուբլի Կարա-Մուրզայի երաժշտական երկաթուղիները հրատարակելու համար:

Ինչպէս յայտնի է, ապրիլի 12-ին լրացաւ Կայսր Ալեքսանդր II-ի հոգեկաւոր դաստիարակ եւ բանաստեղծ Ժուկովսկու մահւմ 50-ամեակը. բայց որովհետեւ այդ օրը ընկաւ չարանքի շաբաթին, այդ պատճառով որոշվեց հանդուցեալ բանաստեղծի յիշատակը տօնել ապրիլի 22-ին: Քաղաքային վարչութիւնը որոշեց, քաղաքի հաշուով պահվող իւրաքանչիւր դպրոցում առանձին հոգեհանգիստ կատարել հանդուցեալ բանաստեղծի համար ապրիլի 22-ին, աղաքային տարածական դպրոցներից մէկին Ժուկովսկու անունը տալ եւ այդ դպրոցում կախել հանդուցեալ բանաստեղծի պատկերը, քաղաքային դպրոցների աշակերտներին բաժանել Ժուկովսկու պատկերները եւ նրա էջան հրատարակութեան գրութեանը, որի համար որոշեց 300 ռ., եւ քաղաքի կենտրոնական փողոցներից մէկը անուանել Ժուկովսկու անունով:

Ապրիլի 18-ին, հինգշաբթի, դումայի դանիճում տեղի ունեցաւ դումայի ձայնաւորների խորհրդակցութիւնը հրաժարված Ե. Սոսոբովի փոխարէն վարչութեան նոր անդամի թեկնածութեան մասին: Խորհրդակցութեանը ներկայ էին 18 ձայնաւորներ. Երեք թեկնածուներից, այն է բժիշկ Կ. Ստեփանեանի, Կոկչանովի եւ Սիմէոնիովի, ձայնաւորները ձայների մեծամասնութեամբ կանգ առան բժիշկ Ստեփանեանի թեկնածութեան վրա, որպէս փորձառու եւ իր գործունէութեամբ յայտնի անձնաւորութեան վրա, իսկ մնացած երկուսի թեկնածութիւնը մերժվեց: Ընտրութիւնը տեղի է ունենալու դումայի դանիճում երկուշաբթի, ապրիլի 22-ին:

Ուրբաթ, ապրիլի 19-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնում տիկին Պապուլայով սիրողներին մանանկութեամբ ներկայացրեց Լեմիլ-բոլի-Դանչենկոյի «Կեանքի արժէքը» պիւսեր, որ թարգմանված է հայերէն եւ ներկայացված է թէ Բագուում եւ թէ Թիֆլիսում: Տիկին Պապուլայովան կատարեց տիկին Դեմուրիի տիպը. Նրա ներկայացրած տիպը տարբերվում է նախկին կատարողների ներկայացրածից նրանով, որ Պապուլայովա զուրա է բերում աւելի վատաստ, աւելի յուսահատված, աւելի տանջված մի կնոջ պատկեր, քան ուրիշները Նրա տիկին Դեմուրիին իսկապէս կանգնած է գերեզմանի առաջ եւ յետ է դառնում կեանքի փոխված հանգամանքների եւ ազդեցութիւնների ճնշման տակ: Միւս դերակատարները միջակ էին:

Հինգշաբթի, ապրիլի 25-ին, Արտիստիքական թատրոնում կայանալու է Արմէնեանի ռենէ-ֆերը: Խաղալու են «Դալիլա», Օկտավի Յէյլէի, 3 գործողութեամբ դրաման, որը ծառայելու է իրեն զբոսնողներին դրամատիքական ասպարէզին նուիրված մի ծանօթ սիրողի—տիկ. Իւ. Սպեղիարեանի, որը կատարելու է իշխանուհի Էլէօնօրայի դերը: Այս պիէսը արդէն արանից 10 տարի առաջ էլ ծառայած էր իրեն զբոսնող նոյն ինքը պ. Արմէնեանին: Յետոյ պ. Արմէնեանը կարտասանէ ֆրանսերէն լեզուով «La grève des forgerons» Պ. Կոպպէի:

Քաղաքային սանիտարական-տեսուչ բժիշկ Ստեփանեան այս օրերս մի նախագիծ ներկայացրեց քաղաքային վարչութեանը՝ կլիմայի վերին, կաթնային ֆերմաների եւ կաթնամշակման ձեռնարկի վրա վերահսկողութիւն ունենալու մասին: Այդ նախագիծով, ոչ ոք քաղաքում իրաւունք չունի կլիմայի կենդանիներ պահել կաթն ծախելու համար եւ կաթնային արդիւնքներ պատրաստել, նոյնպէս եւ կաթնամշակման ձեռնարկ պարապել, առանց քաղաքային վարչութեան թոյլտուութեան: Մինչեւ 3 կլիմայի կողմը կարելի է պահել քաղաքի սահմաններում, իսկ երեքից աւելին—քաղաքի ծայրերում: Կաթնատու կողմի վրա պէտք է հաստատվի անասնաբուժական-սանիտարական վերահսկողութիւն: Բարակացաւի նշաններ ունեցող կենդանիները պէտք է մարմնին քաղաքային սահմաններում կենդանու տիրույթ յայտնելու օրից երկու շաբաթվայ ընթացքում: Կաթնամշակման ֆերմաները, որոնք կաթ են ուղարկում քաղաք վաճառելու համար, պարտաւոր են անասնաբուժի վկայականներ ունենալ իրանց կողմից առողջութեան մասին եւ այլն:

Ապրիլի 18-ին տեղի ունեցաւ Կովկասեան Կայսերական բժշկական ընկերութեան հանդիսաւոր նիստը: Նախագահի օգնական բժշկապետ Սնանովի ձեռնից յետոյ կարգադրեց անցնալ տարվայ հաշիւը ընկերութեան գործունէութեան մասին: Ապա կարգադրեցին զեկուցումներ բժիշկ Գեղեվանովի՝ հոգեկան հիւանդների համար, ապաստարաններ հիմնելու մասին եւ բժիշկ Ստեփանեանի՝ Հասարակական կոնք տուբերկուլոզի դէմ Արեւմտեան Եւրոպայում եւ Ռուսաստանում Բժիշկ Գեղեվանովի անց, որ անցնալ դարը ներկային կոչումն ստացան հոգեկան հիւանդութիւն ունեցողների շատութեան պատճառով: Բոլոր երկրորդի կատարողական թւերից, երեւում է, որ այդ հիւանդութիւնը անպէս տարածվել է, որ խելագարութիւնը ոչ թէ պատահական եւ հազուադէպ հիւանդութիւն է համարվում, այլ դա մի ժողովրդական թշուառութիւն է, սոցիալական մի չարիք: Սեղանաւորութիւնը եւ բարակացաւը մարդկութեան երկու մեծագոյն չարիքներ են, որոնցից առաջինը զոհ են դառնում հասարակական ոյժերի 1/300, իսկ երկրորդին 1/320: Ընդհանուր ստատիստիկայի հիման վրա Թիֆլիսը իր 160,000 ազգայնականութեամբ 480 հոգեպէս հիւանդներ պէտք է ունենայ եւ ապաստան տայ 160 խելագարներին: Բժիշկ Ստեփանեան ուշադրութիւն է հրահրում այն բանի վրա, որ նախ միջին թուով բոլոր մարդկանց 1/10 մեծւում են տուբերկուլոզից, երկրորդ՝ որ մահվան ահագին տոկոսը ընկնում է ծաղիկ հասակում գտնվողների վրա, եւ վերջապէս, որ տուբերկուլոզը հարուածում է զլխաւորապէս աշխատանքի մարդկանց, զրկելով այդպիսով պետութիւնը օգտակար ոյժերից, իսկ նախնեք—յաճախ միակ կերակրողից: Բժիշկ Ստեփանեան այն եզրակացութեան է գալիս, որ տուբերկուլոզի դէմ կոնք պէտք է հասարակական լինի, որի մէջ պէտք է մասնակցեն եւ գիտութիւնը, եւ դրամագրութիւնը, եւ իշխանութիւնը, մի խօսքով ամբողջ հասարակութիւնը: Ապա յիշելով Եւրոպայում զանազան միջոցներով մղվող կոնք տուբերկուլոզի դէմ, զեկուցանողը խօսեց Ռուսաստանի մասին, ասելով, թէ Ռուսաստանը շատ աղքատ է հակառուբերկուլոզային հիմնարկութիւններով, եւ դրան ապացոյց է այն, որ ամեն տարի այդ հիւանդութիւնից մեռնում են մինչեւ կէս միլիոն մարդիկ, իսկ Մոսկւայի եւ Պետերբուրգի բարակացաւից մեռնողների թուով առաջին տեղին են բռնում աշխարհիս երեսին: Վերջում բժիշկ Ստեփանեան յոյս յայտնեց, որ մօտիկ ապագայում մեղ մի կողմում, Բոսանիական այգու հանդէպ, կունենանք մի գեղեցիկ սանատորիա:

ԷՄԻԱՆՆԻՑ մեղ գրում են. «Զատական տօններին էլ միմեծի մայր տաճարում պատարա-

գին երգում էր երիտասարդ Կոմիտաս վարպետի պատարասած երգեցիկ քառամաս խումբը: Ի հարկէ, խումբը բացառապէս կազմված էր ձեռնարանի աշակերտներից: Պէտք է ասել, որ թէպէտ Կոմիտաս վարպետը մի քանի անգամ փոփոխութեան է ենթարկել իր ձայնագրած պատարաքը, բայց տաճարի նկատմամբ են նրա մէջ պակասութիւններ, որոնք խանգարում են ներդաշնակութեանը: Այն ինչ ապրիլի 14-ին ձեռնարանի հանդիսարանում, նոյն եռանդով վարպետի զեկուլոզութեամբ, խմբի երգած մի քանի ժողովրդական երգերը, ինչպէս, օրինակ, «Հօրովէր», «Նախնայ», «Այաքեալ սարն ամպելա» եւ մանաւանդ «Ո՛ր ինչ ուրախ բան ըլալ կոնծարան» եւ այլն, որ ձայնաքեր է ինքը հայր Կոմիտասը, հիմաւոր տպաւորութիւն թողեցին լսողի վրա: Ինչպէս ասեց խմբի Կոմիտաս վարպետը 34 ժողովրդական երգ է ձայնագրել, իսկ ազգային եւ կրօնական մօտ 50: Երիտասարդ վարպետը շատ որոշուած է իր սիրած գործով, որով կարելի է ենթադրել, որ նա կարող է մեր երաժշտական ասպարէզում բաւական աչքի ընկնող դեր կատարել: Ի սրտէ ցանկանք աջողութիւնս:

ԷՄԻԱՆՆԻՑ մեղ գրում են. «Երկուշաբթի մեռելոցի օրը, ս. Գայանէի վանքում պատարաք կար, որին ներկայ էր ամենայն կողմից խմբիկներ: Վեհափառ տօնի առթիւ լոյս տալ խօսեց: Պատարաքից յետոյ վանքից դուր հոգեհանգիստ կատարվեց»:

ՇՈՒՇՈՒՑ մեղ գրում են. «Բէլական գործի չինութեան գործի մասին քաղաքագրուի 3 իշխանեացի առաքելութիւնը մասամբ պատվեց աջողութեամբ: Պ. Առաքելեան խոստովանեց, որ 25,000 ռ. դնել Եւրոպայ քաղաքային վարչութեան տարածութեան տակ: Երբ այդ գումարը կը ծախվի, նա նորից այդպիսի էլ լոյս կը թողնէ եւ այսպէս 100—110 հազար ռուբլ մինչեւ չէքի վերջնական կառուցումը: Լաւ ուշ, քան երբէք»:

ԲԱՔՈՒՆԻՑ մեղ գրում են. «Երէկ, ապրիլ 16-ին, ժամի մօտ 10-ին հրաշալի գարնանային եղանակ էր, մէկը այն եղանակներից, որոնք Բաքուում հազուադէպ են: Բազում գրաւորներ էր: Քաղաքի կենտրոնական մասերը եւ ծովափը լիքն էին գրունդ երկեսի հասարակութեամբ: Յանկարծ բարձրացաւ մի այնպիսի փոթորիկ, որի նմանը հարկւրաւանայ ծերունիներն էլ չեն յիշում: Մի րօպէում երկիրը միջինեց: Փոշու սարսափելի թշնամի սիւները բարձրանում էին գետնից դէպի երկինք եւ ապա ուժգին ցրվում գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւն գտնվում համար: Կառը, ձիաքաղ չը կար Միջով լքա նաւերը տաշելի կտորների պէս վերվայր էին թռչկոտում: Սարսափահար նաւապետները չը գիտէին ինչ անեն: Մի քանի տուբերկուլոզի գետնին, տանելով իրանց հետ ձանապարհի գտնվող մարդ, շուն, քաղ եւ աւաղ: Երբ փակվում պատարաքվում մի անկիւ

այն մաստուրը, որ կառուցված է մասնաւոր
նուիրաւորութեամբ ի յիշատակ Նոյա Կայսերա-
կան Մեծութիւններէ պատկառութեամբ
ՄԻՏԱՎԱՆ Ամառը Պրիւրայտեան երկրէ զա-
նազան կէտերում կը բացվին զիւղատնտեսա-
կան 16 ցուցանալէսնէր. երկրագործութեան
միջնորդութիւնը նշանակել է 503 պարգեւներ
ԲԱԳՈՒԻ Ժանապարհ ընկան Աւստրա պարս-
կական զեւպան Միքիւ-Հասանը եւ իսկական
պետական խորհրդական Կոնստանտին, որը ու-
ղարկված է ուղեկցելու Շահին Ռուսաստանում
19 ապրիլի

Ֆիւլիպիւմի Ա. Ռուսաց «Բէյութիւն» զբոսա-
կերը, որ շինված է Կրասնովոյ, ճանապարհ ըն-
կաւ Ռուսաստան

ՊԱՐԻՉ. Բերսոն համաձայնեց զնել իր
թեկնածութիւնը Դրոմ զէպարտամենտում
հանրապետական թեկնածուները հրաժարվեցին
թեկնածութիւնից ի նպաստ նրա

ԼՕՆԴՈՆ. «Բէյութիւն» գործակալութեան տե-
ղեկութիւնները համաձայն, անձնատուր լինելու
պայմանները քննելուց յետոյ, որ պատրաստ են
ընդունել բոլորներ պարագլուխները, նրանք կը
զան գլխաւոր բանակը՝ Կիտլենէրի հետ վերջ-
նական որոշումն կայացնելու համար

ԿԱԼԿԱՍ. Սաստիկ ցիկլոնը պաշարեց ամ-
բող Դակկա քաղաքը հարեւան տեղերով.
պայմաններ 416 մարդիկ. հունձը ոչնչացած է.
ազգաբնակչութիւնը ծայրայեղ կարօտութեան
մէջ է

19 ապրիլի

ՄՕՍԿԱ. Եկան բէյութիւն զբոսաւորներ
ներկայացուցիչները, որոնք մտադրութիւն ու-
նեն կառուցանելու Մոսկովայի մօտ քաղաք
տներ կանաչիկապալով եւ էլէկտրական կայա-
րանով, որոնք կը միացնուին էլէկտրական ճա-
նապարհով Մոսկովայի հետ

ՄԻՏԱՎԱՆ. Բանաւորական գործադուլներ
պատճառով Դանիայում, զանազան առեւտ-
րականները վարձեցին բանաւորներ խմբեր լա-
տիներէց եւ էստոներէց

ՎԱՇԻՆԴՏՈՆ. Պատգամաւորներ ժողովում
Բէյութիւն առաջարկութիւն մտցրեց, որով խնդրում
է զանազանութեան նախագահին պատերազմա-
կան կօտորաբանդա յայտարարել արտահանվող
ձիերը եւ ջրիւնները, որպէս զի հարաւային Աֆ-
րիկայում պատերազմող կողմերը Միացեալ-
Նահանգներին նաւահանգիստներէց օգուտ չը
բաղեն՝ այդ կենդանիները արտահանելու համար
ՖԻՆԼԱՆԴԻԱՅ ՄԱՍԿԻՆ ՎՐԱ. «Ֆրանկֆուրտի
Լրագրի» հաղորդում են Տրիպոլից, որ այն-
անդ եկել է Կ. Պոլսից 2000 մարդուց բաղկա-
ցած թիւրքաց զորաբաժինը

ԼՕՆԴՈՆ. «Standard» լրագիրը հաղորդում է,
որ բոլորներ ժողովներում մինչեւ այժմ մե-
ծամասնութիւնը հակվում է դէպի խաղաղու-
թեան դաշն կապելը, բայց անհաւատալի չէ,
որ անհաշտները կը մնան յառաջ, ինչ տեսակ
մեծահոգի պայմաններ էլ առաջարկվեն

Ձիւնորական միջնորդութիւնից հաղորդեց,
որ պատրաստութիւններ են տեսնված ծովով
սղարկելու տասը հազարից աւել մարդիկ եւ
երկու հազար գլուխ ձիեր տասն եւ չորս նա-
ւերով

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երկրագործութեան եւ պե-
տական կալուածների միջնորդ Ա. Ս. Երմոլով
ապրիլի 19-ին վերադարձաւ Պետերբուրգ
20 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Պետական գանձարանի զե-
պարտամենտի զիւրկտոր գաղտնի խորհրդական
Դիմիտրի Կոնստանտինով է ֆինանսների միջնոր-
դի օգնական

Ձիւնորական միջնորդ գեներալ-ադիւտանտ
Կուրպատկինի Պետերբուրգից հեռանալու
պատճառով նրա պարտաւորութիւնները կա-
տարելու է զլխաւոր չտարի հրամանատար գե-
ներալ-լէյտենանտ Սախարով

ՇԱՄԱՆԻ. Այսօր երեկոյան 7 ժամին թող
երկրաշարժ էր

ԼՕՆԴՈՆ. Ինչպէս իմացել է «Բէյութիւն» գոր-
ծակալութիւնը «Բիրմինհամ Պատ»-ի հաղոր-
դագրութիւնը, թէ եապոնական կառավարու-
թիւնը իսկապէս բրիտանական նաւատորմի տրա-
մադրութեան տակ դրեց բոլոր պետական զի-
նարանները Հնու Արեւելքում, անհիմն է

ԲԵՐԼԻՆ. Պրուսական Գէորգ պրինցը վախ-
ճանկեց

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
19 ապրիլի

Բորսայի դիւկետը 4 1/2—6 1/4 ը.
Պետական 4% ընտան — 96 3/4 »
I խաղար. տոմսերը 42 1/2 »
II 361 — »

III 304 — »
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ. . . 89 — »
Բազուր » — »
Թիֆլիսի հող. բանկի 50% . . . 90 1/4 — »
» 4 1/2 0/0 . . . — »
Բազուրի նաւթ. Ընկ. 452 — »
Կապիտալի Ընկ. 4800 — »
Մանիպալեան եւ Ընկ. 190 — »

Ռոմազիւր ԱԼԻՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍԱՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՌԱՏՐՈՆ
Հինգշաբթի, ապրիլի 25-ին
կը կայանայ

Արտեմիանի թեկնախար
բարեհաճ մասնակցութեամբ տիկ. Ի. Սպէ-
շիարեանի, որը կը կատարէ իշխանուհի Ելի-
նորայի դերը
I

Գ Ա Լ Ի Լ Ա

Դրամա 3 գործ. եւ 5 պատկերով, հեղ. Օ.
Ֆէյլէյ, թարգ. Ա. Յովհաննիսեանի.
Մասնակցում են տիկ. Ջարէլ, Մատինեան,
օր. Դանիւրեան (Երկրորդ դէրբիւտ), Ար-
փենիկ, պ.պ. Միքայէլ, Միքայէլ, Երի-
ցեան եւ Ազեան
II

LA GRÈVE DES FORGERONS

Մօնթը Ժ. Կոպէի, որ կարգաւոր է ֆրանսի-
քէն լեզուով պ. Արմէնեան
Սիկլըն է 8 ժամին
N. B. Ոչ ըրին տոմսով չի ուղարկվի ծան-
կացողները իրանք պէտք է զիմեն Արտիստա-
կան ընկերութեան թատրոնի կասսան
1—3

Լոյս տեսաւ
ԲՃ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԲԺՇԿԻ ԶՐՈՅՏՆԵՐԻ № 3
ՎԱՐԱԿԻ ԶԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆԸ-
ՐԱՆՑ ԹՈՅՆԸ
23 նկարներով
Գինն է 15 ԿՕԳ.
Մամուլի տակն է՝ «Թըքալտ» կամ «Բարա-
կացաւ»
Մախիւմ է «Կենտրոնական» եւ «Գուտ-
տնեքեք» զբոսաւորանքներում եւ հե-
ղինակի մօտ (Тифлисе, Д—ру Арцвыи.
6—10)

ՇՈՒՇԻ
Ատամնարոյժ Շ. Բ. Արօնի
մշտական ատամնարոյժական կարիքէտ
Ընդունելութիւնը առաւօտեան ժամը 10-ից
մինչեւ 2-ը եւ երեկոյան 4-ից մինչեւ 7-ը
1—8

РОЯЛОФОНЬ
ИТАЛЬЯНСКАГО ПРОИЗВОДСТВА
Новейший механический
ИНСТРУМЕНТЪ СЪ РУЧКОЙ
въ видѣ рояля о ст. рояльными оченъ
мягкими и пріятными звуками.
МОЖНО ИГРАТЬ ОТЪ САМОГО
PIANISSIMO ДО FORTISSIMO
СО ВСѢМИ ОТТѢНКАМИ.
ИСПОЛНЕНИЕ ПІЕСЬ САМОЕ ОТЧЕ-
ТЛИВОЕ И КРАСИВОЕ.
РОЯЛОФОНЬ 4 Октавный
ЦѢНА 180 РУБЛЕЙ.
ПІЕСИ КЪ НЕМУ ЗА МЕТРЪ 50 КОП.
РОЯЛОФОНЬ 6 Октавный
ЦѢНА 300 РУБЛЕЙ.
Піесы къ нему за метръ 75 коп.
Представитель для Россіи
І. Ф. МЮЛЛЕРЪ
МОСКВА, ПЕТРОВКА.
Списокъ піесъ и подробное описаніе, а так-
же полный иллюстрированный прейс-ку-
рантъ всѣмъ инструментамъ безплатно.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Ամսիս 21-ին, Նոր կիրակի օրը, ա. պատա-
րագից յետոյ, լինելու է ԵՐԿՐՈՐԴ—ՎԵՐԶՆԱ-
ԿԱՆ ԺՈՂՈՎ ՇԱՄՔՈՒՆՑՈՆ ա. Աստուածածին
եկեղեցում՝ եկեղեցական նոր սենեակների կա-
ռուցման հարցով զբաղվելու Աստի՝ սրանով
հրաւիրում եմ վերոյիշեալ եկեղեցու բարե-
պաշտ ծխականներին՝ որոշած ժողովին մաս-
նակցելու
Թիֆլիսի բ. մասի գործակալ՝
Գրիգոր քահ. Երզնկեանց

ԱՏԱՄԱՐՈՅԺ
Օր. Մարեհիկ
ՅԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանի
(Յ. Կ.) 50

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐՆԵՐ

Գտնվում է ֆինանսների միջնորդութեան իրաւասութեան տակ. Ուսումնարանը հիմնված
է Թիֆլիսի վաճառականական դասակարգից. դասընթացը եւ աւագն է. Առաջին դասարանը
ընդունվում են առանց քննութեան քաղաքային ուսումնարաններում աւարտած աշակերտները
(1872 թ. կանոնադրութեան համաձայն). Ուսման վարձը տարեկան 80 ռուբլի է:
Դասընթացը աւարտողների իրաւունքները. — անձնական պատուաւոր քաղաքացու կոչում
հինգ տարի առեւտրական հիմնարկութիւնների մէջ ծառայելուց յետոյ: Պետական ծառայու-
թեան մէջ՝ քաղաքացիական առաջին աստիճան ստանալու իրաւունք, առանց քննութեան 2-ի
նուորագրութեան մէջ՝ երկրորդ կարգի արտոնութիւններ:
Ուսումնարանը կը բացվի 1902 թ. սեպտեմբերի 17-ին. Ուսման սկիզբը՝ սեպտեմբերի
18-ին. Ուսումնարանի բնակարանը՝ Նիկոլայեւսկայա հրապարակ, № 23, տուն Զաւրիեւի:
Մագիստրները՝ մեծարկական, կոչման եւ ծաղկի պատուաւորման վկայականների հետ մի-
սին ընդունվում են Թիֆլիսի առեւտրական ուսումնարանում ամենայն օր մինչեւ օգոստոս
21-ը:
Ուսումնարանը ժամանակաւորապէս կառավարում է Թիֆլիսի առեւտրական դպրոցի դ-
ր եկեղեցու:

ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱՐ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ
(X-րդ տարին իր գոյութեան)

Բաղկացած է երկու պատրաստական դասարաններից, համապատասխան պետական մի-
նակարգ դպրոցների նոյն դասարաններին Աշակերտները ընդունվում են իւրեւ գիշերօթիկ, ք-
րեկօթիկ (полупансионеры) եւ երթեւեկներ Պատրաստվում են նոյնպէս աշակերտներ յատկա-
պէս Թիֆլիսի նորաբաց Կայսերական-Գեղարուեստական (художественное) դպրոցի համար
Վարժարանում աւանդվում են կրթն, հայոց լեզու եւ օտար լեզուներ՝ կառավարչական դպրո-
ցների հետ ուսուցիչների ղեկավարութեամբ: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ամեն
օր, 9—1 ժամը ցերեկվայ, իսկ երեկոյան՝ 4—7. Сухобная ул. д. 13.
1—3 (21, 25, 28) Վարժանի կառավարիչ՝ Յ. Ղարագեօղեան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒՔԻԱՆ
ՎԱՐՅՈՒՅԻՆԸ

Պատու ունի յայտնելու, որ կիրակի, ապրիլի 21-ին, երեկոյան ժամը 8-ին, քաղաքի
տան դաշինում նշանակված է տարեկան ընդհանուր ժողով, փոխադէս մարտի 31-ին նշան-
ված ժողովի, որը չը կայացաւ որով լինով անդամներ չը հաւաքվելու պատճառով:
Պարագլուխն է աւարկան երն են՝
1) 1901 թ. կը եւ մտից հաշի քննութիւնը եւ հաստատութիւնը:
2) Վերաւորող յանձնաժողովի ղեկուցումը:
3) 1902 թ. նախահաշի հաստատութիւնը,
4) Վարչութեան 3 նոր անդամների, փոխ-անդամների եւ վերաւորող յանձնաժողովի
3 անդամի ընտրութիւնը:
(մ. 12, 13, 20, 21) 3—4

1877 թ. 1882 թ. 1886 թ. 1896 թ.
Պ. Ա. Սմիլնովի Ընկերութիւնը Մօկվայում
հաղորդում է ի տեղեկութիւն իր յարգելի գնողներին, որ բարձր յատկութեան ՍԵՂԱՆԻ ԳԻՆԻ,
Կովկասեան բնական ԿՕՆԵԱՎ, օղիներ եւ լիկեօրներ կարելի է գնել բոլոր խանութներում, իսկ
մեծ քանակութիւններով, Մօկվայի գինեւոր, աւելացնելով միայն ճանապարհածախար-
ք 2 Ռ. Ա. Գ. Ի. Ա. Ն. Ե. Ի. Բ. պահեստից, Բազուր, Գալանթարովի պատասժում:
Պարսկաստանի բոլոր քաղաքների համար իշխալ պարսկերէնը ուղարկվում են ակցիյա
դուրս եկած:
(Կ. Կ.) 8—20

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“
ԿՕՆՏԵՏԻ ԵՒ ՇՕԿՈԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան գիւղատնտեսական ցուցանալէսում մեր պատրաստած ապրանքները ալ ամենա-
կովկասում կօնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵՐ ԱՐԾԱՐԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈՒՍԻՆ, Կարապէլ «ԻԻԻԻԼԵՑԱՅԱ» եւ առա-
րակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղանի:
Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ:
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պալլոսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութից № 772:
36—100 (Յ. Կ.)

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՂԻՆԱՐԵՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒՔԻԱՆ ՎԱՐՅՈՒՅԻՆԸ

սրանով հրաւիրում է պ.պ. փայտեղերին տարեկան ընդհանուր ժողովի, որ տեղի է ունենա-
լու կիրակի, ապրիլի 28-ին, երեկոյան 8 ժամին, Վարչութեան շինութեան մէջ, Երեւանեան
հրապարակ, տ. Սարգսիւսի
Ձաղման առարկաներն են՝
1) Հաշի եւ բալանսի քննութիւնը եւ հաստատութիւնը անցեալ 1901 թ.ի:
2) Մախսերի նախահաշիւը եւ գործողութիւնների պլանը ներկայ տարվայ:
3) Վերաւորող յանձնաժողովի անդամների ընտրութիւնը:
4) Ներկայ ընկերութիւնից վերակազմվող Թիֆլիսի Առեւտրական Նաւթարդիւնաբերական
Ակցիոներական ընկերութեան կանոնադրութեան նախագիծը:
Մի եւ նոյն ժամանակ Վարչութիւնը յիշեցնում է. 1) որ հաւատարմագրերը պէտք է
սերկայացնել Վարչութեանը ոչ ուշ, քան երեք օր առաջ ժողովից, համաձայն Ընկերութեան
դաշնագրի 24-րդ կէտի, 2) որ սկզբնական անդորրագրերի մէջ սեփականատէրից
պէտք է կատարվի ամեն բանով համաձայն Ընկերութեան դաշնագրի 8-րդ կէտի:
(18, 20, 25) 2—3